ԱՆՈՒՇ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ
ճարտարապետության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ավագ գիտաշխատող
Էլ-փոստ՝ anoush_arch@hotmail.com
DOI: 10.56813/2953-786X-2023.3-50

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՀԱՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ներածություն

Երևանում գտնվող սակավաթիվ, բայց շատ արժեքավոր միջնադարյան հայկական հուշարձանների հետ մեկտեղ, մեր քաղաքում պահպանվել է պարսկական ճարտարապետության գոհարներից մեկը՝ Պարսկական խանության ժամանակաշրջանից: Երբ թուրք-պարսկական երկար պայքարից հետո 1747 թվականին վերջնականապես ձևավորվեց Երևանի խանությունը, և քաղաքը դարձավ խանության վարչական կենտրոն՝ հատակագծային իր եռամաս կառուցվածքով՝ ամրոց, բուն քաղաք և արվարձաններ, կառուցվեցին նաև բազմաթիվ պաշտամունքային և քաղաքացիական շենքեր:

Կապույտ մզկիթի պատմությունը և եվրոպացի ճանապարհորդների հիշատակումները դրա մասին

Երևան քաղաքը յուրահատուկ է նրանով, որ՝ ունենալով մոտ 3000 տարվա պատմություն, գրեթե չունի դրա նյութական ակնհայտ վկայություններ: Իհարկե, քաղաքում առկա են նեոլիթյան և բրոնզեդարյան բնակավայրերի հետքեր, ուրարտական ամրոցների ավերակներ և միջնադարյան հուշարձաններ: Ընդ որում, ըստ պատմագիրների վկայությունների (որոնց թվում՝ Սեբեոսը, Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Տարոնացին, Սամվել Անեցին, Առաքել Դավրիժեցին և ուրիշները)՝ եթե քաղաքի շրջակա վայրերում (Պտղնի, Ավան, Ջրվեժ և այլն) շատ էին վաղմիջնադարյան հուշարձանները, ապա բուն քաղաքում առկա էին զարգացած և նույնիսկ ուշ միջնադարի հուշարձաններ՝

թե՛ 13-րդ դարի (օրինակ, Կաթողիկե եկեղեցին), թե՛ ավելի ուշ կառուցվածները՝ Զորավոր, Սբ. Սարգիս և այլ եկեղեցիները: Սակայն, նույնիսկ պահպանված հուշարձաններն այսօր որոշիչ դեր չունեն քաղաքի կերպարի ստեղծման գործում: Ուստի Երևանի պատմության մասին վկայող ցանկացած հուշարձան կարևոր նշանակություն ունի և պահանջում է համապատասխան վերաբերմունք՝ ուսումնասիրություն, պահպանություն և խնամք:

Մինչդեռ մեկ-երկու շատ արժեքավոր միջնադարյան հայկական հուշարձանների հետ մեկտեղ Երևանում ունենք պարսկական ճարտարապետության մի գոհար, որը պահպանվել է Պարսկական խանության ժամանակաշրջանից: Երբ թուրք-պարսկական երկար պայքարից հետո 1747 թվականին վերջնականապես ձևավորվեց Երևանի խանությունը, իսկ քաղաքը վերածվեց խանության վարչական կենտրոնի, ձևավորվեց նաև դրա հատակագծային եռամաս կառուցվածքը՝ ամրոց, բուն քաղաք և արվարձաններ, և կառուցվեցին բազմաթիվ պաշտամունքային և քաղաքացիական շենքեր:

Եվրոպացի ճանապարհորդները՝ այդ ժամանակաշրջանում լինելով Երևանում, անդրադառնում էին թե՛ քաղաքի պատմությանը, թե՛ նրա ճարտարապետությանը՝ շենքերին ու շինություններին: Օրինակ՝ 17-18-րդ դարերի Ֆրանսիացի հայտնի բուսաբան և ճանապարհորդ Ժոզեֆ Պիտտոն դե Տուրնեֆորը, լինելով Երևանում, գրում է քաղաքի պատմության, ավելի ստույգ՝ պարսիկների և թուրքերի կողմից դրա նվաճման համառոտ պատմության մասին, վկայակոչելով իր հայրենակից՝ ճանապարհորդ Ժան Շարդենին. «Շարդենի ասելով, - գրում է Տուրնեֆորը, - 1582 թվականին Երևանը վերցրել էին թուրքերը, որոնք կառուցեցին բերդը, հետո՝ 1604-ին, քաղաքը ետ վերցրեցին պարսիկները, … 1635 թվականին նրանք (պարսիկները) նվաճեցին այն և տիրապետում են մինչ այսօր»[13], - դա գրված է 18-րդ դարի սկզբին[14]:

---

[13] Г. Карагёзян, Армянский мир в «Путешествии в Левант» Турнефора, Ереван, 2017, с. 110.

[14] Voyages du chevalier Chardin en Perse, t. II, p. 169 -170.

«Դիմացը, - գրել է Շարդենը, - գտնվում է կրպակներով շրջապատված հրապարակ, որտեղ ծախում են տարբեր տեսակի սսնդամթերք, իսկ դրա կողքին են գտնվում գեղեցիկ մզկիթը և երկու սրճարան»[15]:

Հիշատակված պաշտամունքային շինությունը (Կապույտ (կամ Մաշչեդե Գյոյ-Ջամե) մզկիթը) կառուցված է Երևանում հենց այդ՝ պարսկական տիրապետության շրջանում (1765-1766 թթ.)՝ այլ շենքերի և համալիրների շարքում: Դա տեղի է ունեցել Երևանի սարդար Հուսեյն Ալի խան Ղաջարի (պարսից շահի դրածո նահանգապետի) օրոք: Ելնելով ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի նկարագրությունից, Հ. Փափազյանը ենթադրում է, որ այդ տեղում գոյություն է ուեցել մեկ այլ՝ հին մզկիթ: Այն կառուցված է եղել 16-րդ դարի առաջին կեսին, երբ Արարատյան երկրում իշխում էին ղզլբաշ ամիրները մասնավորապես՝ Դիվ-սուլթան Ռումլուն, որը Երևանում ծավալել էր որոշակի շինարարական գործունեություն: Մզկիթը, որը կոչվում էր հենց իր հիմնադրի անունով՝ Դիվ-սուլթանի մզկիթ, ըստ Հ. Փափազյանի ենթադրության՝ քանդվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ[16]:

Կապույտ մզկիթի ճարտարապետական առանձնահատկությունները և գեղարվեստական կերպարը

Դրա տեղում կառուցված նոր մզկիթը, որը պատկանում է շիա դավանությանը, մեկն էր Երևանում գոյություն ունեցող 7 մզկիթներից, ընդ որում՝ դրանցից ամենամեծը: Իր ճարտարապետական հորինվածքով և գեղարվեստական արտահայտչամիջոցներով Կապույտ մզկիթն արդարացիորեն համարվում էր Կովկասում հավասարը չունեցող: Համալիրի հյուսիս-հարավ կողմնորոշում ունեցող ուղղանկյան ընդհանուր մակերեսն է 7000 քմ (100x70մ): Մզկիթը գտնվում է համալիրի

---

[15] Նույն տեղում, էջ 161–164:

[16] Հ. Փափազյան, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.), ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973 թ., հ. 6, էջ 26:

տարածքի հարավային կողմում: Շինության արտաքին հորինվածքը իրենից ներկայացնում է լայնաթռիչք գմբեթով քառակուսի ծավալ, որի զանգվածայնությանը հակադրված է հարավարևելյան անկյունում գտնվող բարձր՝ 24 մ բարձրություն ունեցող մինարեթը: Այն միակ պահպանվածն է երբեմնի 4 մինարեթներից: Արտաքուստ բոլորաձև մինարեթի ներսում գտնվում են դեպի վեր նեղացող ներքին պտուտակ աստիճաններ, իսկ վերևում այն գոտևորված է պատշգամբ-սրահով:

Համալիրը կազմում են բազմաթիվ օժանդակ շինություններ, որոնց թվում՝ 28 խուց, մեդրեսե և գրադարան: Այս բոլոր շինությունները դասավորված են մեծ (72x46մ) ներքին բակի պարագծով: Մզկիթն ունի երեք մուտք՝ գլխավորները հարավից և արևմուտքից, իսկ օժանդակը՝ արևելքից: Շինության ներքին հորինվածքի հիմքում միմյանց մեջ բացվող գմբեթածածկ երեք աղոթասրահներ են, որոնցից կենտրոնականը ամենամեծն է (12x12մ): Գլխավոր աղոթասրահի և մինարեթի շքամուտքերը, ինչպես նաև դեպի ներքին բակ նայող ճակատները՝ ձևավորված են գունավոր (գերիշխողը՝ կապույտ, ինչպես նաև կանաչ և դեղին), բուսական և երկրաչափական զարդերով պատված ջնարակված հախճապակյա սալիկներով: Շենքի ընդհանուր տեսքը շատ գունագեղ է և տպավորիչ:

Բակի կենտրոնում գտնվում է ջրավազանը, որի շուրջը կանաչապատված է, իսկ ծառուղիները՝ սալարկված: Կանաչապատված տարածությունը շրջապատված է քարե սյուներին ամրացված մետաղական ցանկապատով՝ այդպես ստեղծելով մի առանձին տարածություն-պուրակ:

Հետաքրքիր է լուծված նաև կառույցի շինանյութի հարցը. այն հիմնականում կառուցված է աղյուսով, իսկ հիմնապատերը և քիվերը տուֆից են: Այսինքն, այստեղ կիրառված է հայկական քարի և իրանական աղյուսի համադրությունը: Բարձ որակի շարվածքի հետ մեկտեղ այս լուծումը կարող է համարվել շինարվեստի փայլուն օրինակ:

Համալիրի հյուսիսային կողմում տեղակայված է փոքր ամառային աղոթասրահը (9x9 մ), որի արևելյան և արևմտյան

կողմերում՝ 12-ական 4x8 մ չափի թաղածածկ բաց նախասրահ ունեցող մեդրեսեի սենյակներն ու հոգևորականների խցերն են, ինչպես և ուխտավորների ժամանակավոր կացարանները:

Հետաքրքիր է որոշ համեմատություն անել Երևանի Կապույտ մզկիթի և նույն ժամանակաշրջանի Իրանում կառուցված ճարտարապետական հուշարձանների հետ: Առաջինը, որը կարող է մեզ համար կարևոր և համեմատելի լինել, դա վերաբերմունքն է ճարտարապետությանը. ինչպես գրում է իրանական պատմաբան և հնագետ Արթուր Պոուպը. «Պարսկական արվեստի բարձրագույն դրսևորումը ճարտարապետությունն է»[17]: Այսինքն, այն ժողովրդի գեղարվեստական մտածողության, պատկերացումների ու աշխարհընկալման յուրահատուկ մարմանավորումն է: Ինչպես և մեր ճարտարապետությունը, անշուշտ, մեր ժողովրդի ինքնորոշման գրավականն է և հատուկ տեղ է գրավում արվեստների մեր հարուստ գանձարանում:

Զուտ ճարտարապետական իմաստով՝ Երևանի Կապույտ մզկիթում, ինչպես և Իրանի տարածքում գտնվող պարսկական հուշարձաններում, մենք տեսնում ենք հստակ երկրաչափական տարրերով արտահայտված լուծումներ՝ քառակուսի, շրջանագիծ, ուղղանկյուն և այլ ծավալներով ստեղծված կառույցներ, ընդարձակ ներքին բակեր, որոնց պարագծով հավաքված են համալիրի մյուս շինությունները:

Իրանի մզկիթներին Երևանի Կապույտ մզկիթը նման է նաև գմբեթի յուրահատուկ ձևավորմամբ՝ այստեղ այն երեսպատված է նույնպիսի գունագեղ սալիկներով, ինչ որ կառույցի այլ մասերը: Մեծ քանակությամբ այդպիսի գունագեղ գմբեթներ կարելի է տեսնել Սպահանում, և հետաքրիրն այն է, որ նրանցում էլ գերիշխում է կապույտ գույնը: Ինչպես գրում է վերոհիշյալ արվեստաբանը՝ արևի տակ այս գմբեթները հիշեցնում էին ահռելի մեծության փիրուզագույն թանկարժեք քարեր, որոնք հեռվից արդեն նկատում էին Մետաքսե ճանապարհով դեպի Իրան գնացողները:

---

[17] Основа мировых архитектурных стилей, 18 июль, 2019, http://iransegodnya.ru/post/view/3330.

Իրանական ճարտարապետության ևս մի քանի կարևոր առանձնահատկություններ են առկա Երևանի մզկիթում՝ ինչպես, օրինակ, ոչ միայն պարզ, այլև զանգվածային ձևերի օգտագործումը, կամ գլխավոր մուտքի խորը դիրքը, մեծությունն ու բարձրությունը, որոնք դրան գերիշխող դեր են տալիս գլխավոր ճակատի վրա:

Կապույտ մզկիթի վերականգնման աշխատանքները

Խորհրդային շրջանի 20-30-ական թվականներին, երբ պաշտամունքային կոթողները քանդվում էին, հայ մտավորականների ջանքերի շնորհիվ Երևանի Կապույտ մզկիթը պահպանվեց: Այստեղ տեղակայվեցին Երևանի պատմության և բնության թանգարանները, իսկ բուն մզկիթի շենքը ծառայում էր որպես Պլանետարիում: Մզկիթի բակն ունի իր սեփական պատմությունը, այստեղ էին հավաքվում Երևանի մշակութային նշանավոր գործիչները՝ Ալեքսանդր Շիրվանզադեն, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Դերենիկ Դեմիրճյանը, Ակսել Բակունցը, Մարտիրոս Սարյանը և ուրիշները:

Սակայն տարիների ընթացքում շրջակա տարածքի հողի նիշի բարձրացման, ինչպես նաև գրունտային և մակերևութային ջրերի ներս թափանցման պատճառով հուշարձանը հետզհետե հայտնվեց վթարային վիճակում: Դեռևս խորհրդային տարիներին՝ 1940, 1950 և 1972 թվականներին, տարվել էին որոշ ամրակայման աշխատանքներ:

Անկախ Հայաստանում՝ 1992 թվականի միջպետական պայմանագրի շրջանակներում և Հայաստանի ու Իրանի Իսլամական Հանրապետությունների մշակույթի նախարարությունների միջև 1995 թվականին կնքված համաձայնագրին համապատասխան՝ 1996 թվականից սկսվեցին Երևանի Կապույտ մզկիթի ուսումնասիրության, նախագծային և վերականգնման աշխատանքները՝ հայ-իրանական մասնագետների կազմով:

Իրանական կողմը պետք է ապահովեր հուշարձանի հիմնավոր վերականգնումը, իսկ հետագայում՝ օգտագործման

ընթացքում, մզկիթի շահագործումը մշակութային նպատակներով: Երևանի քաղաքապետարանը Կապույտ մզկիթի վերականգնման պաշտոնական պատվիրատուն էր, և պետք է նպաստեր պատմաճարտարապետական հուշարձանի պահպանման միջոցառումներին: Կապույտ մզկիթի վերականգնման աշխատանքներում ընդգրկվել են ինչպես Իրանի Իսլամական Հանրապետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության վերականգնող ճարտարապետներ ու վարպետներ: Հայկական կողմից վերականգնողական աշխատանքներին մասնակցում էր ճարտարապետ-վերականգնող՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինարարական ծրագրերի ղեկավար Գրիգոր Նալբանդյանը: Հայաստանում պատմամշակութային ժառանգության պահպանության ասպարեզում այս միջազգային մակարդակով առաջին իրական համագործակցությունը չափազանց կարևոր քայլ էր:

Ինչպես նշում է Գ. Նալբանդյանը, վերականգնողական աշխատանքներին նախորդեցին ողջ համալիրի ուսումնասիրությունը, տեխնիկական վիճակի փաստագրումը, չափագրումը, պեղումները, արձանագրությունների վավերացումն ու վերծանումը, ինչպես նաև գիտանախագծային և այլ աշխատանքներ[18]: Կատարված ուսումնասիրությունները կարևոր էին ոչ միայն հուշարձանի վերականգնման գիտամեթոդական հիմնավորման համար, այլև որպես Երևանի և նույնիսկ ամբողջ տարածաշրջանի պատմության ու մշակույթի որոշակի հարցերի բացահայտման օրինակ: 1997-ից մինչև 1998 թվականը կատարվեցին հիմնական կոնստրուկտիվ տարրերի՝ հիմնապատերի, կամարների, թաղերի, գմբեթների, տանիքների վերականգնումը, ամրացումն ու ջրամեկուսացումը: Չափազանց կարևոր էր վերականգնման աշխատանքներին հայ և իրանցի վարպետների մոտեցումը, որի հիմքում դրված էր ավանդական

[18] Գ. Նալբանդյան, Երևանի Կապույտ մզկիթի երկրորդ կյանքը, «Ճարտարապետություն, շինարարություն» ամսագիր, 2012 թ., N 2, էջ 46-49:

շինարարական տեխնոլոգիաների կիրառումը, ինչի շնորհիվ համալիրը ստացավ իր նախնական տեսքը: Շինությունների կոնստրուկտիվ տարրերի ամրակայման և ամրացման նպատակով օգտագործվում էին էկոլոգիապես մաքուր նյութեր՝ քար, աղյուս, ալեբաստր, կավ, խուրմայի արմատից և ուղտի բրդից մանված ամրանավորող պարաններ:

Այդ աշխատանքներից հետո իրականացվեցին համալիրի գեղարվեստական կերպարի համար մեծ նշանակություն ունեցող աշխատանքներ՝ մզկիթի շքամուտքերի, բացվածքների, մինարեթի ու աղոթասրահի գմբեթի դեկորատիվ հարդարանքի՝ ջնարակած գունավոր հախճասալերի, որմնապատկերների վերականգնումը: Դրանց նպաստել էր նաև այն, որ մաքրման աշխատանքների ժամանակ բազմաշերտ սվաղի տակից ի հայտ էին եկել արժեքավոր արձանագրություններ և որմնանկարներ, որոնք ամրակայվում և վերականգնվում էին հատուկ նյութերով, իսկ հախճասալերն ըստ իրենց չափերի, գույների և նկարվածքների՝ պատրաստվել էին Սպահանում ու Թավրիզում, և տեղափոխվել Երևան:

Երևանի Կապույտ մզկիթի վերականգնման իրականացումը կարևորագույն դեր ունեցավ դարավոր պատմություն ունեցող երկու երկրների բազմաթիվ պատմամշակութային հուշարձանների հիմնավոր արժևորման, մանրամասն ուսումնասիրության, վերականգնման, օգտագործման, ինչպես նաև արդի մշակութային կյանքում ընդգրկման համար:

Եզրակացություն

Կապույտ մզկիթը կարևոր դեր ունի Երևանի պատմության, քաղաքի այդ ժամանակաշրջանի գեղարվեստական կերպարի մասին պատկերացում կազմելու, ինչպես նաև իրանական ճարտարապետության այլ հուշարձանների հետ համեմատական ուսումնասիրության գործում լիարժեք պատկեր ստանալու համար: Կարևոր է նաև ճանաչել Կապույտ մզկիթի համալիրի դերը Երևանի մշակութային կյանքում՝ թե՛ անցյալում, թե՛ հիմա: Այսօր այն

ակտիվորեն ընդգրկված է Երևանի մշակութային կյանքում՝ հանդիսանալով հայ-իրանական մշակութային կապերի դրսևորման և հաստատման կարևոր վայր:

Բացի այդ, Երևանի Կապույտ մզկիթի վերականգնման ծրագրի օրինակը շատ մեծ դեր ունեցավ երկու երկրների մշակութային համագործակցության համար և նպաստեց դրանց սահմաններում գտնվող բազմաթիվ ճարտարապետական հուշարձանների արժևորմանը, ուսումնասիրությանը, պահպանմանը, վերականգնմանը, օգտագործմանը և այլ խնդիրների լուծմանն ու իրականացմանը:

ANUSH TER-MINASYAN
Candidate of Architecture,
RA NAS Art Institute, senior researcher
E-mail: anoush_arch@hotmail.com

ONE OF THE JEWELS OF PERSIAN ARCHITECTURE IN YEREVAN

The Blue Mosque plays an important role in understanding the history of Yerevan, the artistic image of the city in that period, as well as in the comparative study with other monuments of Iranian architecture have the best and most complete picture of this architecture. It is also important to recognize the role of the Blue Mosque complex in the cultural life of Yerevan, both past and present. Today it is actively included in the cultural life of Yerevan, making it an important place for the manifestation and establishment of Armenian-Iranian cultural ties.

In addition, the example of the restoration project of the Blue Mosque of Yerevan played a very important role in the cultural cooperation of the two countries and contributed to the appreciation, study, preservation, restoration, use and other issues of solving and implementing many architectural monuments within their borders.

Эривань. Мечеть. - Erivan. Mosquée.

Эривань. - Erivan.
Дворъ Мечети.
Cour de la mosquée

10240. Эривань. Минаретъ городской мечети. 157.